ԹԻՎ 14 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

«06» ապրիլի 2025թ.
ք. Էջմիածին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 12-Ա

ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԱՄՓՈՓԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2025 թվականի մարտի 30-ին Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Փարաքար համայնքում տեղի են ունեցել տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ:

2025 թվականի մարտի 31-ին թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը, հիմք ընդունելով թվով 16 տեղամասային ընտրական հանձնաժողովների քվեարկության արդյունքների արձանագրությունները, ամփոփել է Փարաքար համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների քվեարկության նախնական արդյունքները և արձանագրությունով վավերացրել:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 74-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն.

«Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը քվեարկության օրվանից հետո՝ 5-րդ օրը, իսկ համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների ընտրությունների դեպքում՝ 7-րդ օրը, հիմք ընդունելով ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների արձանագրությունները, վերահաշվարկի արդյունքները, քվեարկության արդյունքների վերաբերյալ ընդունած որոշումները, կազմում է արձանագրություն՝ համայնքում քվեարկության արդյունքների վերաբերյալ:»:

Նշված իրավանորմի պահանջների հաշվառմամբ, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ վիճակահանությամբ որոշված տեղամասերում քվեարկության արդյունքների վերահաշվարկի արդյունքում որևէ փոփոխություն չի արձանագրվել, տեղամասերում քվեարկության արդյունքների վերահաշվարկի որևէ դիմում չի ստացվել, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը սեփական նախաձեռնությամբ ևս չի իրականացրել քվեարկության արդյունքների վերահաշվարկ՝ թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը 2025 թվականի ապրիլի 6-ին կազմել է արձանագրություն քվեարկության արդյունքների վերաբերյալ:

2025 թվականի մարտի 30-ին տեղի ունեցած Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Փարաքար համայնքի ավագանու արտահերթ ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում Հայաստանի Հանրապետության վարչական դատարան հայցադիմում չի ներկայացվել:

2025 թվականի մարտի 30-ին տեղի ունեցած Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Փարաքար համայնքի ավագանու արտահերթ ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում իրավասու սուբյեկտների կողմից թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով դիմումներ (բողոքներ) չեն ներկայացվել:

Թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն ուսումնասիրել է 2025 թվականի մարտի 30-ին տեղի ունեցած Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Փարաքար համայնքի ավագանու արտահերթ ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով կազմավորված տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրը՝ 2025 թվականի մարտի 30-ին արձանագրված խախտումների վերաբերյալ գնահատականները և 2025թ. ապրիլի 3-ին ընդունել է թիվ 11-Ա որոշումը, ըստ որի՝ արձանագրված խախտումների վերաբերյալ գնահատականներն ընտրությունների արդյունքների վրա որևէ ազդեցություն չեն ունեցել:

Թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն ուսումնասիրել է նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայության 04.04.2025թ. եզրակացությունը՝ Փարաքար համայնքի համամասնական ընտրակարգով անցկացվող ավագանու 2025 թվականի մարտի 30-ի արտահերթ ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի և կից փաստաթղթերի ստուգման արդյունքների մասին, որում վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը փաստել է, որ բոլոր կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կողմից ներկայացված՝ նախընտրական հիմնադրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերում խախտումներ չեն հայտնաբերվել և դրանք համապատասխանում են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կանոնակարգումներին:

Ընտրական օրենսգրքի 74-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին պարբերության համաձայն.

«Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը քվեարկության օրվանից հետո՝ 5-րդ օրը, իսկ համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների ընտրությունների դեպքում՝ 7-րդ օրը, հիմք ընդունելով համայնքում քվեարկության արդյունքների արձանագրությունը, դատարանի վճիռները, հանձնաժողովում ստացված դիմումների (բողոքների) քննարկման արդյունքով ընդունած որոշումները, տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումների վերաբերյալ ընդունած որոշումը, ամփոփում է համայնքում քվեարկության արդյունքները և ընդունում որոշում ընտրությունների արդյունքների վերաբերյալ:»:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 74-րդ հոդվածի 6-րդ մասով՝ թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

2025 թվականի մարտի 30-ին տեղի ունեցած Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Փարաքար համայնքի ավագանու արտահերթ ընտրությունների նախապատրաստման և քվեարկության ընթացքում տեղի չեն ունեցել Ընտրական օրենսգրքի խախտումներ, որոնք ազդել են ընտրությունների արդյունքների վրա:

Թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ՝ **Գ.Նազարյան**

ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ * ԻՍՍԿՈՂՈՎ
ԸՀՀ N14